## 1.

# ՏԱՂ Ի ԽԾԲԾՑԻՈՅ

### ԶԱՔԱՐԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ԳՆՈՒՆԵԱՑ

Առաջին մարդոյն նմանիս,
զոր ստեղծեաց Հայրն անեղական.
Բանին ծոցածին անճառ,
զնոյ արար պատկեր տիրական.

Գեղեցիկ ես քան զնա,
զոր չինեաց աջն Հայրական.
Դու չես հողեղէն զարմէ,
՚ի լուսոյն ես արփիական.

Երկնից բանակքն անմահից,
ըստ պատկերըն քո հիմնան.
Զքեզ իւղ մեծագին ասեմ,
որ խորհուրդ ես արքայական.

Էդեմաբուխ աղբեւր,
արարածք ի քէն զովանան.
Ընդրեալդ ի զաւրաց վերնոց,
զովելի ես որդւոց մարդկան.

Թագ զարմանալի կազմիս,
յորքոյից գըլուխս նըշան.
Ժողովին ծաղկունք լերանցդ,
եւ տեսանին զքոյ գեղդ աննըման.

Իբր ըղթագաւոր բազմիս,
հաստ անուս դու անմահութեան.
Լոյս վառիս ի գիշերի,
հալածես զխաւարս հեռական.

Խոհեմ իմաստուն զինուոր,
սարսափին զաւրքն ի քէն դողան.
Ծառ յեդեմական դրախտէն,
միշտ կանաչ եւ անթափական.

Կենաց պտուղ ի լուսոյ,
անթարշամ եւ անապական.
Հոտ անուշ ի քէն բուրէ,
փարատէ զցաւս մարդկան.

Ձայն քո տատրակի սիրուն,
ողջախոհ մըտաւք մաքրական.

Ղամբար տարդ լուսաւոր,
երանես ի յասաւատեան.

Ճմեռոյ խորոց ի յորթոյ,
քաղցրահամ բաժակ բերկրութեան.
Մաքուր մարգարիտ մարմնով,
վարսաւոր սրովբէանըման.

Յարմարեալ ի տունն փրկչի.
վարդ փթթեալ արմաւ եւ շուշան,
Նոր ծաղիկ ի գնացս ջուրց,
հոտ բուրէ ի քիմս մարդկան.

Շաղ անուս յաւաւատէ,
ով տեանի ըզքեզ հիման.
Ոսկի խընձոր ցանկալի,
յետ եւ ես ընդ սարգիական.

Չքնաղ վայելուչ գունով,
երփնագոյն որպէս ծիածան.
Պատկեր նըման հրեշտակի,
սակայն եւ յոյժ հրաշագան.

Ջուր մանրածաւալ գնացիւր,
երանես ի յոսկի ական.
Ռահ զառուց հրեղինացն,
պահէ զքեզ զաւրքն անմարմնական.

Սակային զմուռ եւ խունկ,
դու ածում ես անապական.
Վայելուչ անգին հանդերձ,
եւ ըղդեստ թագաւորական.

Տաղիւք երգս զրուատեցից,
զքեզ զովեմ քաղցրիկ ձայնական.
Րատեալ ծարաւիմ հոգւով,
նըւագեմ առ քոյդ տեսութեան.

Ցաւոք եմ վիրաւորեալ,
սպասեմ ես առողջութեան.
Իւսեա զիս ի քեզ սիրով,
բըժըշկեա յախտէս զազրական.

Փութամ հեռեւիլ վարուցդ,
որ ամբիծ ես անապական.
Քոյ արարողին երգեմք,
զաւրհնութիւնս միշտ եւ յաւիտեան.

---

Բնագիր ըստ ձեռ. Մատենադարանի Թ. 681, Եր. 47ա–49բ Ձեռագիրը (= A.). Համեմատած ընդ Ս. Վ. Տեղեկոյթ հրատարակութեան հետ = H. «Սն Հայերէն», էջ 78–81).

Խորագիրն A. ունի «Այլ տաղ ի խծբծոյ Զաքարիայ եպիսկոպոսէ ամենայն Գնունեաց». H. «Այլ տաղ Զաքարիայ Գնունեաց եպիսկոպոսէ»։

4. H. մարդոյ նմանես։ — 6. H. բանին։ — 7. H. զնայ։ — 11. H. չէ ՚ի։ — 12. H. բանակ անմահին։ — 13. H. ընդ պատկերըն։ — 14. H. իւղ։ — 16. H. էդեմաբուխ աղբիւր։ — 18. H. զորաց։ — 19. A. որդոց։ — 23. H. տեսանէն... գեղդ։ — 26. H. անունս։ — 28. AH. զինուոր։ — 32. H. պտուղն։

40. H. յորթոյն։ — 41. A. քաղցրայհամ։ — 43. A. սրովբէայնման։ — 45. A. վարթ։ H. չէ եւ։ — 49. H. տեանէ։ — 50. H. խնձոր։ — 53. A. երրնագորդ։ — 56. A. մանրայծաւալ։ H. մաքուր ծաւալ։ — 58. H. զաստուցն հրեղինաց։ — 59. H. պահ։ — 64. A. զրուատեցից։ H. զրուատիցս։ — 65. H. զովեն։ — 67. A. հոգով։ — 70. AH. իւսեայ։ — 71. A. բ, ժըշկեայ։ — 72. H. հեռեւել։